Հավելված 2

Տեղեկատվություն
ՀՀ մարզերի և այլ երկրների վարչատարածքային միավորների միջև
համագործակցության վերաբերյալ

Թիվ	Համագործակցություն	Տարեթիվ	Ընթացիկ վիճակ
1	,,ԱՄՔՈՐ Հայաստան,, բարեգործական կազմակերպության, Հայ-Կանադական ,,Մեփլ Լիֆ,, կլինիկայի, ՀՀ Արագածոտնի մարզպետարանի հետ համագործակցությամբ առողջապահական ծրագրի իրականացում	2018 թվականի ընթացքում	Արուճ, Ուջան, Ագարակ և Ոսկեվազ համայնքներում իրականացվում է առողջապահական ծրագիր՝ տղամարդկանց վերարտադրողական առողջության ուղղությամբ: Ծրագիրն ուղղված է տղամարդկանց մոտ շագանակագեղձի ադենոմայի և քաղցկեղի կանխարգելմանը: Մարզի բուժհաստատություններում կազմակերպվում է տղամարդկանց ուլտրաձայնային հետազոտություն և մասնագետ-ուրոլոգի խորհրդատվություն:
2	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը Հարավային Կովկասում (ԿԻԿ) ծրագրի և ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կողմից «Էկոհամակարգային ծառայությունների ինտեգրումը տեղական ինքնակառավարման մարմիններում» ծրագրի իրականացում	2018 թվականի ընթացքում	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը Հարավային Կովկասում (ԿԻԿ) ծրագրի և ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կողմից իրականացվում է «Էկոհամակարգային ծառայությունների ինտեգրումը տեղական ինքնակառավարման մարմիններում» ծրագիրը:

3	ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի կողմից ,,Դպրոցական տաք սնունդ,, ծրագրի իրականացում	2018 թվականի ընթացքում	Մարզի 86 դպրոցում ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի կողմից իրականացվում է ,,Դպրոցական տաք սնունդ,, ծրագիրը, որի շահառու են դպրոցների նախակրթարանների և 1-4-րդ դասարանների աշակերտները:
4	ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի շրջանակում հին ջրագծի ջրամբարի վերակառուցում	2018թ. օգոստոս	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը, ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի շրջանակում վերակառուցվել է հին ջրագծի ջրամբարը, անցկացվել նոր խողովակներ: Նախագծի իրականացման շնորհիվ գյուղի 90 ընտանիքի կենսամակարդակը զգալիորեն բարելավվել է
5	Մարզպետ Աշոտ Սիմոնյանի նամակ-հրավերը՝ ուղղված Բուլղարիայի Հանրապետության Ստարա Զագորայի մարզպետ Գերգանա Վելիչկովա Միկովային	09.08.2018	Մարզպետ Աշոտ Սիմոնյանը նամակ-հրավեր է ուղարկել Բուլղարիայի Հանրապետության Ստարա Զագորայի մարզպետ Գերգանա Վելիչկովա Միկովային, որով պատրաստակամություն է հայտնել բարեկամական և համագործակցային կապեր հաստատելու ՀՀ Արագածոտնի մարզի և Ստարա Զագորայի մարզի միջև: Առաջարկվել է համագործակցության շրջանակում համաձայնագրի կնքման հնարավորությունը:
6	Մասնակցություն Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից իրականացվող ,,Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում,, ծրագրի շրջանակում	16.08.2018թ.	Մարզի պատվիրակությունը մասնակցել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից իրականացվող ,,Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում,, ծրագրի շրջանակում կազմակերպված ,,Գիտելիքի կառավարում,, միջոցառմանը:

	կազմակերպված ,,Գիտելիքի կառավարում,, միջոցառմանը		
7	Թալին համայնքի պատվիրակության այցը Լեհաստան	2018թ. հուլիսի 6-16	Լեհաստանի Նիսա քաղաքի քաղաքապետ Չեսլավ Բիլոբրանի հրավերով Թալին քաղաքի պատվիրակությունը քաղաքապետ Սարգիս Արամյանի գլխավորությամբ այցելել է Լեհաստան: Նիսա քաղաքի կենտրոնում գտնվող Բարեկամության հրապարակում բացվել է Թալինի խորհրդանիշի հուշաքարը: Նիսայի համայնքային խորհրդի նախագահ Միրոսլավ Արանովիչի և Թալինի քաղաքապետ Սարգիս Արամյանի կողմից ստորագրվել է համագործակցության Հուշագիր ԼՀ Օպոլե վոևոդության Նիսա և ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքների միջև: Նիսայի քաղաքային խորհրդի նիստերի դահլիճի ճեմասրահում բացվել է Թալինի գեղարվեստի դպրոցի աշակերտների աշխատանքների ցուցահանդես: Պայմանավորվածություն է ձեռք Թալինի բժշկական կենտրոնը համալրել բժշկական սարքավորումներով և շտապ օգնության մեքենայով:
8	,,Ուրբան,, հիմնադրամի հետ համատեղ մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային տոպրակների կիրառումը կրճատելու համար պիլոտային ծրագրի իրականացում Թալին քաղաքում	2018թ. օգոստոս	,,Ուրբան,, հիմնադրամի և Թալինի քաղաքապետարանի հետ համատեղ իրականացվում է մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային տոպրակների կիրառումը կրճատելու համար պիլոտային ծրագիր: Ծրագրի շրջանակներում իրականացվելու են երկտեղ աղբարկղերի տեղադրման, պլաստիկ շշերի վերամշակման, Թալինի աղբավայրի ցանկապատման, վերանորոգման աշխատանքներ:

9	Լեհաստանի Նիս քաղաքի կողմից Թալին քաղաքի բժշկական կենտրոնին շտապ օգնության մեքենայի և բժշկական սարքավորումների նվիրաբերում	30.08.2018թ.	Լեհաստանի Նիս և Արագածոտնի մարզի Թալին քաղաքների համագործակցության շրջանակում Նիսի քաղաքապետն այցելել է Թալին քաղաք և Թալինի բժշկական կենտրոնին է նվիրաբերել շտապ օգնության մեկ մեքենա և բժշկական սարքավորումներ:
10	Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կողմից շտապ օգնության մեքենաների տրամադրում	2018թ. սեպտեմբեր	Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կողմից Արագածոտնի մարզի բժշկական կենտրոններին տրամադրվել է շտապ օգնության 8 մեքենա:
11	ՀՀ-ում Լեհաստանի դեսպանության «Փոքր դրամաշնորհային աջակցություն» ծրագրի շրջանակում «Հարմարավետ պայմաններ՝ շատ կրթված երեխաներ» ծրագրի իրականացում	24.09.2018թ.	ՀՀ-ում Լեհաստանի դեսպանության «Փոքր դրամաշնորհային աջակցություն» ծրագրի շրջանակում «Եվրասիա» ԲՀԿ-ն և Հայաստանում Լեհաստանի դեսպանությունը իրականացրել են «Հարմարավետ պայմաններ՝ շատ կրթված երեխաներ» համատեղ ծրագիրը, որի շրջանակում Ապարան համայնքի Արագած բնակավայրում վերանորոգվել է «Գուսան Աշխույժ»-ի անվան արվեստի դպրոցի պարի դասասենյակը:
12	Ֆրանսիայի Ալվորվիլ քաղաքի պատվիրակության այցը Արագածոտնի մարզ	28.09.2018	Ֆրանսիայի Ալվորվիլ քաղաքի պատվիրակությունն այցելել է Արագածոտնի մարզ: Պատվիրակությանն ընդունել է մարզպետ Աշոտ Սիմոնյանը: Կայացել է այցելություն Ալֆորվիլի քույր համայնք Օշական: Պատվիրակության անդամները ծանոթացել են Ալֆորվիլի կողմից վերանորոգվող միջնակարգ դպրոցում իրականացվող աշխատանքներին: